

Բյուրեղավանի քաղաքային համայնքի «Մարզամշակութային» կենտրոնն բյուջետային հիմնարկը հիմնադրվել է Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 12-ի N49 որոշմամբ: Հիմնարկի գործունեության առարկան և նպատակը Բյուրեղավանի քաղաքային համայնքի բնակչության և հիմնարկի սաների ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների և ունակությունների զարգացման և իրացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց ֆիզիկական, կիրառական ու ստեղծագործական հմտությունների և գիտելիքների ձևավորումն է: Հիմնարկի գործունեությունն ուղղված է ազգաբնակչության մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու հնարավորությունների ապահովմանը: Հիմնարկի տնօրեն՝ Էդիկ Հովհաննեսի Պիճիկյան Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ ք. Բյուրեղավան մշակույթի տուն

{jcomments off}